ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ը

07 նոյեմբերի..2014 թվականի N...136......-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2014-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՆԿ-182-Ն կարգադրության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 836-Ն որոշման պահանջների կատարումն ապահովելու նպատակով.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցում ներառված՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի միջոցառումների և դրանց կատարման պատասխանատուների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալներին և աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

մշակել սույն հրամանում ներառված միջոցառումների կատարմանն ուղղված աշխատանքային ծրագրեր և դրանք ներառել աշխատակազմի աշխատանքային ծրագրերում՝ սկսած 2015 թվականից:

Պատասխանատու՝ համակարգող նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար:

3. Նախարարի տեղակալ Ա. Գալստյանին.

1) համագործակցել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 836-Ն որոշմամբ սահմանված ՀՀ այլ պետական մարմինների հետ և յուրաքանչյուր կիսամյակի վերջին նախարարության գործակարգավարական խորհրդակցության ժամանակ ներկայացնել տեղեկատվություն՝ կատարվող աշխատանքների ընթացքի, դրանց կատարման խոչընդոտների և ձեռք բերված արդյունքների վերաբերյալ.

2) ամփոփել կիսամյակի արդյունքների վերաբերյալ այլ պետական մարմիններից ստացված տեղեկատվությունը և ապահովել ամփոփ տեղեկատվության ներկայացումը ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը թողնում եմ ինձ:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների
նախարարի «07» 10 2014թ.
N 136-Ա հրամանի

# ՑԱՆԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2014-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ՝ ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ

| N | Նպատակը | Միջոցառումները | Ժամկետը | Պատասխանատու նախարարի տեղակալ, իրականացնող ստորաբաժանում/ կազմակերպություն |
|---|---|---|---|---|
| 1. | **Էներգետիկ անվտանգության ապահովում՝ սպառնալիքների և մարտահրավերների կանխարգելում.** ա) էներգահամակարգում շահագործվող սարքավորումների և մեխանիզմների ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր աստիճանի նվազեցում | Շահագործումից դուրս բերելու կամ կոնսերվացնելու ծրագրի մշակում («Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի է) ենթակետի համաձայն, կոնսերվացման դեպքում կոնսերվացման ծախսերը կներառվեն սակագներում). | | |
| | | 1. էներգաագրեգատների հետագա շահագործման պիտանելիության որոշում | 2015 թ. սեպտեմբեր | 1. Արեգ Գալստյան, Լևոն Շահվերդյան, Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն, Զարգացման վարչություն |
| | | 2. էներգաագրեգատների հետագա ճակատագրի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | 2015 թ. դեկտեմբեր | 2. Արեգ Գալստյան, Լևոն Շահվերդյան, Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն, Զարգացման վարչություն |
| | | 3. Ընդունված որոշումների պահանջների իրականացում | Սկսած 2016 թ.-ից | 3. Համակարգող նախարարի տեղակալ՝ ըստ ամրակցված կազմակերպության, համապատասխան կազմակերպություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | բ) ՀԱԷԿ-ի գործող ատոմային էներգաբլոկի աշխատանքային ռեսուրսի երկարացում 10 տարով | ՀՀ և ՌԴ ֆինանսների նախարարությունները միջոցներ կձեռնարկեն վարկային միջոցների ներգրավման վերաբերյալ միջկառավարական համաձայնագրի ստորագրման ուղղությամբ, որի արդյունքում կմեկնարկի Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման գործընթացը:<br>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը և ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի հետ համատեղ հնարավորին սեղմ ժամկետում կապահովեն երկրորդ էներգաբլոկի շահագործման երկարացման լիցենզավորման գործընթացը և նախագծի իրականացումը, համաձայն 2014 թվականի մարտի 27-ի ՀՀ կառավարության թիվ 12-րդ նիստի արձանագրության. | 2014-2018 թթ. | Արեգ Գալստյան,<br>Իոսիֆ Իսայան,<br>Ատոմային էներգետիկայի վարչություն,<br>Ֆինանսատնտեսագիտական վարչություն,<br>Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն,<br>«Հայկական ԱԷԿ» ՓԲԸ,<br>«Հայատոմ» ՓԲԸ |
| | | 1. ՀՀ ֆինանսների նախարարության և ՀԱԷԿ-ի միջև Ծրագրի իրականացման ենթավարկային համաձայնագրի ստորագրում | ՀՀ-ՌԴ վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 7 օրվա ընթացքում | 1. Արեգ Գալստյան, Իոսիֆ Իսայան, Իրավաբանական բաժին,<br>Ֆինանսատնտեսագիտական վարչություն,<br>Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն,<br>Արտաքին կապերի վարչություն,<br>Ատոմային էներգետիկայի վարչություն,<br>«Հայկական ԱԷԿ» ՓԲԸ |
| | | 2. Հայկական ԱԷԿ-ի և ՌԴ ատոմային էներգետիկայի Ռոսատոմ պետական կորպորացիայի ''Ռուսատոմ Սերվիս'' ԲԲԸ միջև Ծրագրի իրականացման պայմանագրի ստորագրում | Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 7-օրյա ժամկետում | 2. Արեգ Գալստյան, Իոսիֆ Իսայան, Իրավաբանական բաժին,<br>Ֆինանսատնտեսագիտական վարչություն,<br>Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն,<br>Արտաքին կապերի վարչություն,<br>Ատոմային էներգետիկայի վարչություն,<br>«Հայկական ԱԷԿ» ՓԲԸ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 3. Ծրագրի առաջին փուլի իրականացում | 2014-2015 թթ. | 3. Արեգ Գալստյան, Ատոմային էներգետիկայի վարչություն, Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն, «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ, «Հայատոմ» ՓԲԸ |
| | | 4. Առաջին փուլի արդյունքների տեխնիկական աուդիտ | 2015 թ. Առաջին փուլի ավարտից հետո մեկամսյա ժամկետում | 4. Արեգ Գալստյան, Ատոմային էներգետիկայի վարչություն, Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն, «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ, «Հայատոմ» ՓԲԸ |
| | | 5. Առաջին փուլի արդյունքների հիման վրա երկրորդ փուլի աշխատանքների մեկնարկ | 2016 թ. | 5. Արեգ Գալստյան, Ատոմային էներգետիկայի վարչություն, Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն, «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ, «Հայատոմ» ՓԲԸ |
| | | 6. Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման լրացուցիչ ժամկանակատվածի համար լիցենզիայի ստացում | 2016-2017թ.թ. | 6. Արեգ Գալստյան, Ատոմային էներգետիկայի վարչություն, «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ, «Հայատոմ» ՓԲԸ |
| | | 7. Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման Ծրագրով նախատեսված անվտանգության մակարդակի բարձրացման աշխատանքների իրականացում | 2016-2018 թթ. | 7. Արեգ Գալստյան, Ատոմային էներգետիկայի վարչություն, «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ, «Հայատոմ» ՓԲԸ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | գ) Էներգետիկ համակարգի հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական անվտանգության մակարդակի բարձրացում | Վերականգնողական միջոցառումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավում ընկերությունների սեփական միջոցներից և վարկային ռեսուրսներից: Էներգետիկ համակարգի (Որոտան ՀԷԿՀ և Սևան-Հրազդան ՀԷԿՀ) հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների ներառում ընկերություններում իրականացվող ծրագրերում: | Վերականգնողական միջոցառումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավում ընկերությունների սեփական միջոցներից և վարկային ռեսուրսներից: Որոտան ՀԷԿՀ-ի գործարքի ավարտից հետո եռամյա ժամկետում ԿՖՎ բանկի կողմից իրականացվող ծրագրի ներկայացում: Սևան-Հրազդան ՀԷԿ-երի վերազինման/վերակառուցման ծրագրում հիդրոտեխնիկական կառույցների անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների ներառում 2014-2025 թթ. | Հայկ Հարությունյան, Զարգացման վարչություն, Ֆինանսատնտեսագիտական վարչություն, Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն, «Որոտան ՀԷԿՀ» ՓԲԸ, «ՄԷԿ» ՓԲԸ |
| | դ) Վառելիքաէներգետիկ ռեսուրսների մատակարարումների ընդհատումների կանխարգելում | Իրականացվող միջոցառումները ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի 17-րդ կետով ամրագրված սպառնալիքների հնարավոր հետևանքների մեղմացմանն ուղղված ծրագրի մշակում. (Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների ծրագիր-ժամանակացույցի ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ արտաքին գործերի, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ պաշտպանության նախարարությունների հետ համատեղ գործողությունների | 2015 թ. ընթացքում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ծրագրի մշակում). | | |
| | | 1. Կանխարգելման միջոցառումների ծրագիր՝ հյուսիսային գազատարի երկարատև խափանման կամ հյուսիսային և հարավային գազատարների միաժամանակյա (մասնավորապես ձմեռային ժամանակահատվածում) խափանման դեպքում | 2015 թ.<br>4-րդ եռամսյակ | 1. Արա Սիմոնյան,<br>Լևոն Շահվերդյան,<br>Արեգ Գալստյան,<br>Արտաքին կապերի վարչություն,<br>Զարգացման վարչություն,<br>Էներգետիկայի պետական տեսչություն,<br>«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ,<br>«ԷԷՀՕ» ՓԲԸ,<br>«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ,<br>«ԲԷՑ» ՓԲԸ |
| | | 2. էլեկտրաէներգիայի և բնական գազի մատակարարումների սահմանափակումների դեպքում ՀՀ կառավարության կողմից սահմանված չափաքանակներով էներգամատակարարման ապահովման նպատակով օպերատիվ սխեմաների մշակում | 2015 թ.<br>4-րդ եռամսյակ | 2. Արա Սիմոնյան,<br>Լևոն Շահվերդյան,<br>Զարգացման վարչություն,<br>«ԷԷՀՕ» ՓԲԸ,<br>«ԲԷՑ» ՓԲԸ,<br>«ՀԷՑ» ՓԲԸ,<br>«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ |
| | | 3. Վրաստանի տարածքում գտնվող գազատարի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերումը Ադրբեջանի կամ Թուրքիայի որևէ ընկերության կողմից ուղղակիորեն կամ այլ միջնորդավորված (աֆիլացված) ընկերության միջոցով՝ միջոցառումների ծրագրի մշակում | 2015 թ.<br>4-րդ եռամսյակ | 3. Լևոն Շահվերդյան,<br>Արեգ Գալստյան,<br>Արտաքին կապերի վարչություն,<br>Զարգացման վարչություն,<br>«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ |
| | | 4. Հայաստանի և Իրանի էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի խափանումների ու Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի մեկուսացված իրավիճակում հայտնվելու պարագայում միջոցառումների ծրագրի մշակում | 2015 թ.<br>4-րդ եռամսյակ | 4. Արա Սիմոնյան,<br>Արտաքին կապերի վարչություն,<br>Զարգացման վարչություն,<br>«ԷԷՀՕ» ՓԲԸ,<br>«ԲԷՑ» ՓԲԸ |
| 2. | Հայկական ԱԷԿ-ի մինչև 1000 ՄՎտ հզորության նոր էներգաբլոկի կառուցում: Շահագործման հանձնում՝ 2026 թ.-ին: | Կազմել ծրագիր՝ նոր ատոմային էներգաբլոկի կառուցման գործընթացի կազմակերպման նպատակով.<br><br>1. Նախնական Ծրագրի մշակում | 2014-2018 թթ.<br><br>2015 թ. մարտ | <br><br>Արեգ Գալստյան, Իոսիֆ Իսայան, Ատոմային էներգետիկայի վարչություն, Արտաքին կապերի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | վարչություն «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ, «Հայատոմ» ՓԲԸ |
| | | 2. Տեխնիկա-տնտեսական հիմնավորում փաստաթղթի վերանայում | 2015 թ. հոկտեմբեր | Արեգ Գալստյան, Իոսիֆ Իսայան, Ատոմային էներգետիկայի վարչություն, Արտաքին կապերի վարչություն «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ, «Հայատոմ» ՓԲԸ |
| | | 3. Ներդրողների ներգրավման համար միջազգային կոնֆերանսի անցկացում (անհրաժեշտության դեպքում) | 2016 թ. մայիս | Արեգ Գալստյան, Իոսիֆ Իսայան, Ատոմային էներգետիկայի վարչություն, Արտաքին կապերի վարչություն «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ, «Հայատոմ» ՓԲԸ |
| | | 4. Բնապահպանական հաշվետվության վերանայում, ֆինանսական միջոցների առկայության դեպքում վերջնական Ծրագրի մշակում | 2016-2017 թթ. | Արեգ Գալստյան, Իոսիֆ Իսայան, Ատոմային էներգետիկայի վարչություն, Արտաքին կապերի վարչություն «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ, «Հայատոմ» ՓԲԸ |
| | | 5. Ծրագրի աշխատանքների իրականացման մեկնարկ | 2018 թ. | Արեգ Գալստյան, Ատոմային էներգետիկայի վարչություն, Արտաքին կապերի վարչություն «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ, «Հայատոմ» ՓԲԸ |
| 3. | ՀՀ-ում կանոնավոր տարեկան էներգետիկ վիճակագրության իրականացում | ՀՀ տարեկան էներգետիկ հաշվեկշռի կազմում՝ Միջազգային էներգետիկ հանձնաժողովի ստանդարտներին համապատասխան | Տարեկան պարբերականությամբ, սկսած 2016թ.-ից | Արեգ Գալստյան, Հայկ Հարությունյան Զարգացման վարչություն |
| 4. | Փոքր ՀԷԿ-երի (մինչև 145 ՄՎտ ընդհանուր հզորությամբ) կառուցում: ՀՀ հիդրոէներգետիկ ներուժի յուրացում, լրացուցիչ շուրջ 500 մլն կՎտ.ժ էլեկտրաէներգիայի արտադրություն ի լրումն ներկայիս մոտ 740 մլն կՎտ.ժ-ի | Նոր կառուցվող փոքր ՀԷԿ-երում միջազգային ստանդարտներին համապատասխան նորագույն տեխնոլոգիաների կիրառման նպատակով խթանող լրացուցիչ միջոցառումների մշակում | 2014 թ. 4-րդ եռամսյակ | Հայկ Հարությունյան, Զարգացման վարչություն |
| 5. | Լոռի բերդ ՀԷԿ-ի (60 ՄՎտ հզորությամբ) կառուցում: | Ներդրումային ծրագրի մշակում | 2015 թ. սեպտեմբեր | Հայկ Հարությունյան, Զարգացման վարչություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ՀՀ հիդրոէներգետիկ ներուժի յուրացում, շուրջ 200 մլն կՎտ.ժ էլեկտրաէներգիայի արտադրություն, օրվա կարգավորվող ջրամբարով: Թողարկումը՝ 2023 թ.-ին: | | | |
| 6. | Շնող ՀԷԿ-ի (75-ից մինչև 100 ՄՎտ հզորությամբ) կառուցում: Հիդրոէներգետիկ ներուժի յուրացում, շուրջ 300-ից մինչև 400 մլն կՎտ.ժ էլեկտրաէներգիայի արտադրություն: Թողարկումը՝ 2023 թ.-ին: | Ներդրումային ծրագրի մշակում | 2015 թ. սեպտեմբեր | Հայկ Հարությունյան, Զարգացման վարչություն |
| 7. | Մեղրի ՀԷԿ-ի (100-130 ՄՎտ հզորությամբ) կառուցում: Թողարկումը՝ մինչև 2020 թ.: | Մեղրի ՀԷԿ-ի կառուցում տարեկան շուրջ 800,0 մլն կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրությամբ | Անընդհատ | Արա Սիմոնյան, Հայկ Հարությունյան, Զարգացման վարչություն, Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն |
| 8. | Հողմակայանների (մինչև 200 ՄՎտ հզորությամբ) կառուցում: ՀՀ հողմաէներգետիկ ներուժի յուրացում, շուրջ 400 մլն կՎտ.ժ էլեկտրաէներգիայի արտադրություն | Ներդրումների ներգրավման նպատակով խթանող լրացուցիչ միջոցառումների մշակում | 2015 թ. 3-րդ եռամսյակ | Հայկ Հարությունյան, Զարգացման վարչություն |
| 9. | Երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման նպատակով հետազոտությունների կատարում և երկրաջերմային էլեկտրակայանի կառուցում.<br><br>ա) Առաջնային էներգակրի պարամետրերի որոշում հորատանցքերի հորատման միջոցով | <br><br><br><br><br>ա) Կլիմայի ներդրումային հիմնադրամների ֆինանսավորման միջոցներից դրամաշնորհային և մեղմ վարկային միջոցներ՝ «Ցածր եկամուտ ունեցող երկրներում վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի» (SREP) շրջանակներում | <br><br><br><br><br>2014 թ. 4-րդ եռամսյակ | <br><br><br><br><br>ա) Հայկ Հարությունյան, Զարգացման վարչություն, Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | երկրաջերմային էներգետիկայի զարգացման համար. դրամաշնորհային միջոցների օգտագործման նպատակով բանակցային աշխատանքների ավարտ | | համակարգման վարչություն |
| | բ) Մինչև 30 ՄՎտ հզորությամբ երկրաջերմային էլեկտրակայանի կառուցում | բ) Երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման աշխատանքների կազմակերպում | 2015-2021 թթ. | բ) Հայկ Հարությունյան, Զարգացման վարչություն, Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն |
| 10. | Արևային էներգիայի օգտագործում էլեկտրաէներգիա ստանալու նպատակով: Արևային ֆոտովոլտայիկ մինչև 30 ՄՎտ հզորության էլեկտրակայանի կառուցում (առաջնեկային ծրագիր): Արտադրված էլեկտրաէներգիայի սակագնի մրցութային կարգով ճշգրտում | Կլիմայի ներդրումային հիմնադրամների ֆինանսավորման միջոցներից դրամաշնորհային և մեղմ վարկային միջոցներ՝ «Ցածր եկամուտ ունեցող երկրներում վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի» (SREP) շրջանակներում արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտայիկ տեխնոլոգիաների զարգացման նպատակով՝ շուրջ 30 ՄՎտ արդյունաբերական մասշտաբի արևային ՖՎ կայանի/ների կառուցման կազմակերպում | 2015-2019 թթ. | Հայկ Հարությունյան, Զարգացման վարչություն, Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն |
| 11. | Երևանի ՋԷԿ-ում 250-450 ՄՎտ հզորությամբ համակցված ցիկլով աշխատող երկրորդ շոգեգազային էներգաբլոկի կառուցում: Մինչև 1,4-2,8 մլրդ կՎտ.ժ էլեկտրաէներգիայի արտադրություն: Թողարկումը 2018 թ.-ին: | Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ բանակցությունների կազմակերպում՝ վարկերի ներգրավման նպատակով.<br><br>1. էներգաբլոկի կառուցման հիմնավորում<br><br>2. Վարկատուի հետ բանակցությունների վարում<br><br>3. Վարկային համաձայնագրի քննարկում և հետագա ընթացքի ապահովում | 2014-2018 թթ. | 1. Լևոն Շահվերդյան,<br>2. Արեգ Գալստյան, Արա Սիմոնյան, Զարգացման վարչություն, Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն, Արտաքին կապերի վարչություն, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ |
| 12. | Իրան-Հայաստան 400 կՎ երկշղթա օդային գծի կառուցում: Տարածաշրջանային ինտեգրացման գործընթացի ապահովում | Իրանական կողմի հետ համատեղ ծրագրի իրականացման ապահովում | 2014-2018 թթ. | Արա Սիմոնյան, Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն, «ԲԷՑ» ՓԲԸ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13. | Հայաստան-Վրաստան 400 կՎ միջհամակարգային նոր գծերի կառուցում: Տարածաշրջանային ինտեգրացման գործընթացի ապահովում: Ըստ մշակված Հայաստան-Վրաստան 400 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի և հաստատուն հոսանքի ներդիրով ենթակայանի կառուցում: | 1. Ծրագրի իրականացման ապահովման նպատակով KFW բանկի հետ բանակցությունների ավարտ և վարկային համաձայնագրի ստորագրում<br><br>2. Հայաստան-Վրաստան 400 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի և հաստատուն հոսանքի ներդիրով ենթակայանի կառուցում | 1. Մեկնարկը՝ 2014 թ. 4-րդ եռամսյակ<br><br>2. 2015-2026 թթ. | Արա Սիմոնյան,<br>Արտաքին կապերի վարչություն,<br>Զարգացման վարչություն,<br>Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն,<br>«ԲԷՑ» ՓԲԸ,<br>«ԷԷՀՕ» ՓԲԸ |
| 14. | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Հրազդան-5 էներգաբլոկի տա-րածքում նոր 400 կՎ լարման ենթակայանի կառուցում: Ենթակայանը հնարավորություն կտա կապել Իրան-Հայաստան 400 կՎ լարման և Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման գծերը | 1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ բանակցությունների վարում<br><br>2. 400 կՎ լարման ենթակայանի նախագծման աշխատանքների իրականացում<br><br>3. 400 կՎ լարման ենթակայանի կառուցման աշխատանքների իրականացում | 1. 2014 թ. 4-րդ եռամսյակ<br><br>2. 2015 թ.<br><br>3. 2016-2017 թթ. | Արա Սիմոնյան,<br>Լևոն Շահվերդյան,<br>Զարգացման վարչություն,<br>Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն,<br>«ԲԷՑ» ՓԲԸ,<br>«ԷԷՀՕ» ՓԲԸ,<br>«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ |
| 15. | Առևտրային և տեխնիկական կորուստների նվազեցում՝ մինչև միջազգայնորեն ընդունված չափանիշները | Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցի արդիականացում և սպասարկման որակի բարձրացում՝<br><br>1. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համատեղ էլեկտրաէներգիայի կորուստների նվազեցման նպատակով ծրագրի և դրա իրականացման ժամանակացույցի մշակում<br><br>2. Ըստ հաստատված ժամանակացույցի միջոցառումների իրականացում | 1. Աշխատանքների մեկնարկը՝ 2015 թ.<br><br>2. 2016-2025 թթ. | Արա Սիմոնյան,<br>Իոսիֆ Իսայան,<br>Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն,<br>Էներգետիկայի պետական տեսչություն,<br>Զարգացման վարչություն,<br>«ԲԷՑ» ՓԲԸ,<br>«ՀԷՑ» ՓԲԸ,<br>«ԷԳՀԻ» ՓԲԸ |
| 16. | Գազամատակարարման հուսալիության աստիճանի բարձրացում | Բնական գազի ստորգետնյա պահեստարանի հասանելի օպտիմալ ծավալի որոշում | 2015 թ.<br>4-րդ եռամսյակ | Լևոն Շահվերդյան,<br>Արեգ Գալստյան,<br>Զարգացման վարչություն,<br>«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ,<br>«ԷԳՀԻ» ՓԲԸ |
| 17. | Էներգետիկայի բնագավառի օբյեկտների հրդեհային և տեխնիկական անվտանգության ապահովում | Էներգետիկայի բնագավառի բոլոր օբյեկտների ահազանգման հակահրդեհային ինքնաշխատ համակարգերի ուղիղ կապով միացումը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի <<911>> ծառայությանը: | 2014-2016 թթ. | Լևոն Շահվերդյան,<br>Զարգացման վարչություն,<br>Էներգետիկայի պետական տեսչություն,<br>Զորահավաքային բաժին, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | «ԷԷՀՕ» ՓԲԸ |
| 18. | Արտակարգ իրավիճակներում էներգետիկ անվտանգության ապահովման մեխանիզմների հստակեցում | «Արտակարգ իրավիճակներում էներգետիկ անվտանգության ապահովման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 2015-2016 թթ. | Լևոն Շահվերդյան, Արեգ Գալստյան, Ա. Սիմոնյան, Զորահավաքային բաժին Զարգացման վարչություն, Էներգետիկայի պետական տեսչություն, «ԷԷՀՕ», ԲԷՑ, ՀԷՑ, Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ-եր, |
| 19. | Ռազմական դրության ժամանակ էներգետիկ անվտանգության ապահովման մեխանիզմների հստակեցում | «Ռազմական դրության ժամանակ էներգետիկ անվտանգության ապահովման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | 2015-2016 թթ. | Լևոն Շահվերդյան, Արեգ Գալստյան, Ա. Սիմոնյան, Զարգացման վարչություն, Զորահավաքային բաժին |
| 20. | Վերականգնվող էներգառեսուրսների արդյունավետ օգտագործման և էներգախնայողության ապահովում | Վերագնահատել հիդրոէներգետիկ ռեսուրսների տեխնիկական ու առևտրային պոտենցյալը.<br>- կատարել բնական ջրահոսքերում հիդրոէներգետիկ ռեսուրսների կանխատեսումային գնահատումներ կապված կլիմայի փոփոխության հետևանքով ջրային ռեսուրսների խոցելիության ու այլ ոլորտներում ջրի պահանջարկի աճի հետ.<br>- դիմել միջազգային դոնոր կազմակերպություններին՝ դրամաշնորհային միջոցների հաշվին բնական ջրահոսքերում հիդրոէներգետիկ ռեսուրսների կանխատեսումային գնահատումներ կատարելու համար, այդ թվում՝ ԱԷԿ-ի համար նախատեսված ջրահոսքերի կանխատեսումային գնահատում | 2016 թ. 4-րդ եռամսյակ | Հայկ Հարությունյան, Արեգ Գալստյան, Զարգացման վարչություն, Արտաքին կապերի վարչություն, Ատոմային էներգետիկայի վարչություն |
| 21 | Էներգետիկայի բնագավառի օրենսդրության կատարելագործում, նորմատիվ տեխնիկական և ստանդարտացման փաստաթղթերի մշակում | Էներգետիկայի բնագավառը կարգավորող օրենքների կատարելագործում, տեխնիկական կանոնակարգերի ներդաշնակեցում միջազգային առաջավոր փորձին համահունչ, նոր տեխնիկական կանոնակարգերի, տեխնիկական նորմերի և Ազգային ստանդարտների մշակում, էներգետիկական շուկայի կանոնների մշակմանն աջակցություն | Շարունակական | Արեգ Գալստյան, Արա Սիմոնյան, Լևոն Շահվերդյան, Հայկ Հարությունյան, Զարգացման վարչություն, Էներգետիկայի պետական տեսչություն, Իրավաբանական բաժին |